ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2011 թվականի **թիվ** 878 քաղ. Մոսկվա

«Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին

«Ղազախստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշեց**.

1. Ընդունել «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 019/2011) (կցվում է):

2. Հաստատել՝

2.1. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 019/2011) պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. Ստանդարտացման ոլորտի փաստաթղթերի ցանկը, որոնք պարունակում են «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 019/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունիսի 1-ից.

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) առնչությամբ՝ մինչեւ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց 2014 թվականի փետրվարի 15-ից ոչ ուշ: Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատմանը (հավաստմանը) առնչվող փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում.

3.3. մինչեւ 2014 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում է Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան արտադրանքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատմանը (հավաստմանը) առնչվող այն

փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան:

Արտադրանքի շրջանառության միասնական նշանով այդպիսի արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում չի թույլատրվում.

3.4. սույն Որոշման 3.2-րդ ենթակետում նշված համապատասխանության գնահատմանը (հավաստմանը) առնչվող փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի (ծառայության ժամկետի) ընթացքում:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ պատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը եւ, սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, եռամսյա ժամկետում այն ներկայացնել Հանձնաժողովի՝ սահմանված կարգով հաստատմանը:

5. Ռուսական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ, ստանդարտների կիրառման արդյունքների դիտանցման հիման վրա, ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ցանկերի թարմացման վերաբերյալ առաջարկությունները նախապատրաստելը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տարեկան մեկ անգամից ոչ պակաս, դրանք սահմանված կարգով հաստատման համար Հանձնաժողովի քարտուղարություն ներկայացնելը:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմինները եւ դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

6.2. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 3.2 - 3.4-րդ ենթակետերը:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**